

ՄԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՔԱՐՈՋԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ռուսաստանի Ոստիկանության դեպարտամենտի
հետաքննությունը Բագրատ վարդապետ Թավաքայանի
1895 թ. նոյեմբերի 12-ի քարոզի վերաբերյալ*

Բանալի բառեր – քարոզ, առաքյալ, Դաշնակցու-
թյուն, Աստված, ազգային գործիչ, Ոստիկանության դեպար-
տամենտ, Թիֆլիսի դատական պալատ, արդարադատու-
թյան նախարար, Բագրատ վարդապետ Թավաքայան, եզ-
րակացություն:

«Մեզ հարկավոր չէ օգնության որևէ խնդրանքով դիմել մի որևէ տիրակալի, քանի որ, Աստծուց բացի, մենք որևէ այլ տիրակալ չունենք և միայն Աստծուց պետք է աջակցություն խնդրենք, և դրանից հետո ինքներս աջակցենք մեկս մյուսին: Ահա, օրինակ, երբ մարդ գտնվում է մահվան մահճում, բժիշկ են հրավիրում, բայց բժիշկը ի վիճակի չէ միայն իր ուժերով փրկել մահացողին: Այդպես էլ մենք՝ հայերս, գտնվում ենք մահացողի վիճակում, ուստի հարկ չկա օգնություն սպասել, այլ պարտավոր ենք լուր խնդրել Աստծուն, որպեսզի նա մեզ ուժ ու եռանդ պարգևի՝ օգնություն ցույց տալու համար մեր եղբայրներին: Այդ պատճառով խորհուրդ են տալիս Ձեզ օգնության խնդրանքով չդիմել ոչ մի տերության, քանի որ այդ տերությունները հետևում են միայն իրենց շահերին, իսկ մինչ այդ մեր եղբայրներին մորթում են: Մեկ անգամ էլ են ասում Ձեզ, մի՛ դիմեք կողմնակի օգնության, այլ ինքներդ աջակցե՛ք մեկդ մյուսին և միայն սեփական ուժերով օգնություն տրամադրե՛ք եղբայրներին»¹:

Բագրատ վարդապետ Թավաքայան

* Ընդունվել է տպագրության 23.03.2021:

1 Մեջբերումը ըստ **ԽՆԴԻՅԱՆ Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն. ակունքներից մինչև 1895 թվա-
կանի վերջերը, Եր., 2006, էջ 365-366:

Բագրատ վարդապետ Թավաքայանը (հեղափոխական ծածկանունը՝ **Ջափ**) ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերնդի վառ ներկայացուցիչներից էր, ով իր կյանքն ամբողջությամբ նվիրեց արևմտահայերի ազատագրության գործին և դարձավ 19-րդ դարի վերջին երկու տասնամյակների հայ ազգային-ազատագրական շարժման ինքնատիպ ու առինքնող դեմքերից մեկը²: Նա դեռևս 1880-ականներին Արևմտյան Հայաստան անցած հայ ազատամարտի առաջին առաքյալներից էր, որի անունը բազմիցս է հիշատակվում ժամանակակիցների հուշերում: ՀՅԴ հիմնադիր ժողովներին հաջորդած տարիներին թուրք-պարսկական սահմանագլխի Դերիկի վանքում այդ խորհրդավոր վարդապետի ծավալած գործունեության մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ: Սակայն դեռևս 1933 թ. Բագրատ վարդապետ Թավաքայանի նամակները հրատարակած Սիմոն Վրացյանը³, իսկ հետագայում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում Թավաքայանի կենսագրության դերիկյան շրջանի մասին ուշագրավ փաստաթղթեր հայտնաբերած ուսումնասիրողները⁴ հիմնականում ուշադրություն են դարձրել նրա 1890-ականների առաջին կեսի գործունեությանը:

Պարսկաստանում սկսված հետապնդումների պատճառով կրկին Անդրկովկաս անցնելուց հետո՝ 1990-ական թթ. երկրորդ կեսին, Թավաքայանը շարունակել է իր ազգանպաստ գործունեությունը: Նա՝ որպես Ալեքսանդրապոլի հոգևոր առաջնորդ, ստանձնել է Կարսի մարզում ու Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականներին օգնություն ցուցաբերելու գործը: Այդ նպատակով Հայոց եկեղեցու հովանու ներքո ստեղծված «սովելոց հանձնաժողովները» այն հարմար տանիքն էին, որի միջոցով եկեղեցին ու ՀՅ Դաշնակցությունը տեղի մտավորականության

2 **Բագրատ վարդապետ (Չևորգ) Թավաքայանը** ծնվել է 1863 թ. Դերբենդում պետական պաշտոնյայի ընտանիքում: Կիսատ թողնելով ուսումը Թիֆլիսի յունկերական դպրոցը՝ նա չորս տարի իբրև հասարակ բանվոր աշխատել է Միխայլովո կայարանի երկաթուղային դեպոյում: Այնուհետև՝ 1880 թ., ուտքով մեկնել է Ալաշկերտ, որտեղ մոտ մեկ տարի շրջագայել է հայկական գյուղերում, ապա՝ անցել Վան, իսկ այնտեղից՝ Տարոն, որտեղ Ջրիկ գյուղում երկու տարի զբաղվել է ուսուցչությամբ: Այստեղ նա առավելապես հայտնի էր Ջափի կեղծանունով: Այնուհետև վերադարձել է Կովկաս և երեք տարի զբաղվել ուսուցչությամբ: Բայց շուտով վերադարձել է Ալաշկերտ, որտեղ Ս. Հովհաննի վանքի վանահայր Հովհաննես Եպիսկոպոսի կողմից ձեռնադրվել է վարդապետ Բագրատ հոգևոր անունով: ՀՅԴ Հիմնադիր ժողովների շրջանում դիմել է կաթողիկոսական տեղապահ Երեմիա Եպիսկոպոս Գալստյանին՝ խնդրելով իրեն հանձնել Դերիկի Ս. Աստվածածին վանքի վանահայրությունը: 1891 թ. մեկնելով Պարսկաստան՝ Թավաքայանը ձեռնամուխ է լինում վանական տնտեսությունը կարգի բերելու գործին, որպեսզի կարողանա ուխտավորների անվան տակ ընդունել Վասպուրական անցնող ու վերադարձող հայդուկներին: Այստեղ նա ծավալում է շատ ակտիվ գործունեություն, ուստի իր վրա է հրավիրում թուրքական ու պարսկական իշխանությունների ուշադրությունը: Խորհրդավոր վարդապետով սկսում է հետաքրքրվել նաև ցարական կառավարությունը, և վերջինիս պահանջով 1893 թ. աշնանը նորընտիր կաթողիկոս Սկրտիչ Խրիմյանը հետ է կանչում նրան: Թավաքայանը վանքի կառավարիչ է նշանակում Սևքարեցի Սաքոյին, իսկ այնտեղ պահվող գեներալի, ծիրի և այլ իրերի ցուցակը հանձնում է իր դաշնակցական ընկերներին ու մեկնում Ալեքսանդրապոլ որպես հոգևոր առաջնորդ: Իր կյանքի վերջին տարիներին նա նախ Թիֆլիսի կոնսիստորիայի անդամ էր, ապա՝ Գանձակի թեմի փոխանորդ: Բագրատ վարդապետ Թավաքայանն իր մահկանացուն կնքեց Բաքվում 1902 թ. ապրիլին 46 տարեկան հասակում:

3 Տե՛ս Բագրատ վարդապետ Թավաքայանի նամակները, գրեց **Ս. Վրացյան**, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1933, N 1, 2, 3:

4 Տե՛ս **Խուրիյան Գ.**, նշվ. աշխ., էջ 286-289:

ակտիվ աջակցությամբ կազմակերպում էին գաղթականներին օգնության ցուցաբերումը: Հենց այս շրջանում է, որ մինչ այդ սուկ Թավրիզի ռուսական հյուպատոսարանի ուշադրությանն արժանացած Բագրատ վարդապետ Թավաքայանը կրկին հայտնվում է ցարական իշխանությունների, բայց այս անգամ արդեն՝ Ոստիկանության դեպարտամենտի նահանգային ու գավառական պաշտոնյաների կազմակերպած հետաքննության կիզակետում: Որովհետև արևմտահայ գաղթականությանը ծառայող հայ հոգևորականի բեղուն գործունեությանը զուգահեռ՝ Թավաքայանն իր հրապարակային ելույթներով ու քարոզներով բարձրացնում էր այնպիսի հարցեր, որոնք հիմնարար նշանակություն ունեին հայ ազատամարտի և հայ ժողովրդի ճակատագրի համար ընդհանրապես: Իր մտքի խորությամբ ու հարցադրումների ռազմավարական բնույթով առանձնանալով հայ ազատամարտի բազմաթիվ գործիչներից՝ Թավաքայանը փորձում էր խորությամբ հասկանալ ու բացատրել միջազգային ու ներազգային նոր կացության առանձնահատկությունները: Հնչակյանների կազմակերպած 1895 թ. սեպտեմբերի 18 (30)-ի Բաբը Ալիի հայտնի ցույցից հետո Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերում սկիզբ առած զանգվածային կոտորածների առաջ բերած տագնապի ու հուսալքության պայմաններում նա փորձում էր հստակեցնել ազգային օրակարգը: Արդեն այդ օրերին ինչպես Թավաքայանի, այնպես էլ Արևմտյան Հայաստանում գործող Հրայր Դժոխքի և այլ գործիչների մոտ հասունանում էր ոչ միայն հնչակյանների աղմկարար ցուցարարությանը, այլև իրենց կուսակիցներից շատերի որդեգրած հայդուկային-հարձակողական մարտավարությանը վերջ տալու գաղափարը: Դա կուսակցական որոշումների էր վերածվելու ավելի ուշ՝ 1998 թ. կայացած ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովում: Սակայն արդեն այդ օրերին ակնհայտ էր, որ, ուժերի կենտրոնացումից ու ինքնապաշտպանական մարտավարության անցնելուց բացի, խիստ կարևոր էր նաև հաշվի առնել այն իրողությունը, որ ցարական Ռուսաստանը ոչ միայն չի աջակցում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարին, այլև անթաքույց կերպով խրախուսում է սուլթանի ջարդարարական քաղաքականությունը: Դրա արտահայտություններից էին 1895 թ. սեպտեմբերի 18 (30)-ի Բաբը Ալիի ցույցից հետո Անդրկովկասում սկիզբ առած հնչակյանների ու դաշակցականների ձերբակալությունները:

Ուժեղացող հետապնդումների պայմաններում 1895 թ. նոյեմբերի 12-ին Ալեքսանդրապոլի Ս. Ասովաձանոր եկեղեցում հնչած Բագրատ վարդապետ Թավաքայանի քարոզն առաջին հերթին արևմտահայությանն օգնելու հարցում սեփական ուժերին ապավինելու կոչ էր: Քարոզն իսկական ռումբի պայթյունի ազդեցություն ունեցավ ժամանակակիցների վրա, որովհետև դրա առանցքում հայ ժողովրդի արևելյան ու արևմտյան հատվածների ճակատա-

գիրը սեփական ուժերով կերտելու հրամայականի արձանագրումն էր: Թուրքիայի ջարդարարական քաղաքականության դեմ **մենակ լինելու** փաստից էր բխում Թավաքայանի «**Աստուց բացի, մենք որևէ այլ տիրակալ չունենք**» հաստատումը: Դրանում արտացոլված՝ ռուսական իշխանությունների քաղաքականության հանդեպ հստակ վերաբերմունքը խոր անհանգստություն էր առաջացրել ցարական պաշտոնյաների շրջանում: Ուստի սկիզբ առավ մի երկար ու ձգձգված հետաքննություն, որի ընթացքում ցարական բյուրոկրատիան՝ արդարադատության նախարարից մինչև ժանդարմական վարչության պետերը, փորձում էր հասկանալ տեղի ունեցածի պատճառները: Այդ ընթացքում ձերբակալվեցին ու Ռուսաստան աքսորվեցին Թավաքայանի հետ համագործակցող «սովելոց հանձնաժողովների» անդամները, որոնցից ոչ բոլորն էին դաշնակցականներ: Ու թեև հոգևոր բարձր պաշտոն զբաղեցնող Բագրատ վարդապետը զերծ մնաց ձերբակալությունից ու աքսորից, սակայն շուտով Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի կողմից տեղափոխվեց Թիֆլիս, ապա՝ Գանձակ: Իսկ ահա Ալեքսանդրապոլում սկիզբ առած հետաքննությունը խոր փակուղի մտավ, քանի որ տեղացիների շրջանում եղած խոսակցությունների հիման վրա գործ կազմելու համար հարկավոր էին կոնկրետ վկայություններ ու ցուցմունքներ, որոնք անհնար էր կորզել պատվասեր ու գաղտնասպահ գյումրեցիներից:

Վերջում նշենք, որ Բագրատ վարդապետ Թավաքայանին ամենադիպուկը բնութագրել է նրան ժամանակակից գործիչներից մեկը՝ Տիգրան Փիրումյանը. «Թավաքալեանի ամբողջ կարճատև կեանքը ինձ լաւ յայտնի լինելով, շտապում եմ առաջուց ասել, որ **նա այնպիսի մի ազգային գործիչ էր, որի նմաններին հայոց աշխարհում գտնելու համար պէտք է ձրագըր ձեռքին ման գալ** (ընդգծումը մերն է – Մ. Դ.)»⁵:

Ստորև ներկայացվող արխիվային վավերագրերը Ալեքսանդրապոլում Թավաքայանի ծավալած գործունեության և նրա 1895 թ. նոյեմբերի 12-ի հիւրավի պատմական քարոզի վերաբերյալ ցարական Ոստիկանության դեպարտամենտի կազմակերպած հետաքննության նյութերն են, որոնք հրապարակվում են առաջին անգամ: Դրանք պատկերացում են տալիս նաև Թավաքայանի հետ առնչություն ունեցած անձնավորությունների նկատմամբ ցարական ժանդարմների կազմակերպած հալածանքների մասին: Մեր ձեռքի տակ է նաև 1895 թ. նոյեմբերի 12-ին Ալեքսանդրապոլի Ս. Աստվածամոր եկեղեցում նրա քարոզի վերաբերյալ համառոտ հաղորդագրության ֆոտոպատճենը, իսկ դրա բնագիրը ժամանակին Մոսկվայում՝ Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում (ԴԱՐՓ), հայտնաբերել և թարգմանաբար տպագրել է Գ. Խուդդինյանը⁶: Մեր կողմից հրապարակվող փաստաթղթերի ֆոտոպատճեն-

5 Փիրումեան Ս., Չորս տարի Վանում, «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 121:

6 Տես Խուդդինյան Գ., նշվ. աշխ., էջ 365-366:

ները պահվում են Հայաստանի Ազգային արխիվի 8-րդ հավաքածուի ֆոնդում, ուստիև տողատակերում բերվող արխիվային տվյալները վերաբերում են դրանց բնագրերի պահպանման վայրին՝ Մոսկվայում գտնվող Ռուսաստանի Դաշնության պետական արխիվին:

Մկրտիչ Գ. Դանիելյան
Պատմ. գիտ. թեկնածու

Մկրտիչ Գ. Դանիելյան – զբաղվում է 1870-1880-ական թթ. նարոդնիկական շարժման, հայ ազգային նարոդնիկության և ազգային կուսակցությունների պատմության հիմնահարցերով:

Էլ. հասցե՝ m.danielyan@mail.ru

Թիվ 1

Նորին Գերազանցություն պարոն Արդարադատության նախարարին
Ներկայացվում է Նորին Գերազանցությանը ընթերցելու համար:

Թիֆլիսի Դատական պալատի դատախազի պաշտոնակատար

Զեկույց

1895 թ. դեկտեմբերի 2-ի և 3-ի N 331, այս տարվա հունվարի 2-ի և 17-ի ու փետրվարի 8-ի NN 94, 95 և 105 զեկույցներով Ալեքսանդրապոլի և Սուրմալուի գավառային պետերը տեղեկացրին Երևանի նահանգային կառավարչին. նրանցից առաջինը՝ այն մասին, որ, ըստ Ալեքսանդրապոլի ոստիկանական պրիստավներ Արսենևի և Տեր-Պետրոսովի, 1895 թ. նոյեմբերի 12-ին հայկական եկեղեցում վարդապետ Բագրատ Թավաքայանցը աղոթողների բազմության առջև քարոզ կարդաց, որում կոչ էր անում ժողովրդին իր միջոցներով միանալու թուրքահայերին օգնության հասնելու ընդհանուր շարժմանը՝ հույսը չդնելով որևէ թագավորի վրա, քանի որ հայերի համար, բացի Աստուծոց, այլ ցար գոյություն չունի, և որ, ըստ ոստիկանական գաղտնի գործակալների տեղեկությունների, Ալեքսանդրապոլում հայկական հեղափոխական կոմիտեի գլխավոր ղեկավարներն են նշված վարդապետ Թավաքայանցը, Պետական ունեցվածքի նախարարության հատուկ հանձնարարությունների պաշտոնյա Գեղամ Տեր-Պետրոսյանը, երդվյալ աստենակալ Պապաջանովը, հայկական քաղաքային

ուսումնարանների տեսուչ Մարգարյանցը, Աստվածամոր եկեղեցուն կից արական դպրոցի ուսուցիչ Կարապետյանցը և հոգևորական տեր Խորեն Աբգարովը: Իսկ երկրորդը տեղեկացնում էր, որ Կոնդմենսկի գավառի Պակրան գյուղից Սուրմալուի գավառի Կողբ գյուղ է եկել 44 հոգուց բաղկացած հեծյալ հայերի զինված մի խումբ, որը մեկօրյա դադարից հետո Կողբ գյուղի բնակիչների օժանդակությամբ անցել է Թուրքիա՝ միանալու թուրքահայերին և մասնակցելու նրանց պայքարին թուրքական կառավարության դեմ, որ Կողբ գյուղի մի քանի հայտնի բնակիչներ զբաղվել են թուրքահայերին զգալի քանակության մատակարարմամբ, և որ Կողբ գյուղում տարածվել է Կոստանդնուպոլսի հայկական հեղափոխական խմբակի թռուցիկը, որը Հնչակյան կուսակցության թռուցիկ թերթի 1895 թ. հոկտեմբերի 6-ի՝ 3-րդ համարն է, որում կոչ էր արվում հայերին օգնելու իրենց եղբայրակիցներին զենքով և դրամով, ընդ որում, այս տարվա հոկտեմբերի 10-ի և 21-ի Սուրմալուի գավառի պաշտոնակատար Բոգուսլավսկու հետաքննության արձանագրության մեջ մանրամասն և հիմնավորված շարադրված են ոստիկանական ձեռք բերած տվյալները, որոնք վկայում են ինչպես նշված իրադարձությունների ձշմարտացիությունը, այնպես էլ Կողբ գյուղի մի քանի բնակիչների մասնակցությունը հայկական ազգային շարժմանը՝ թուրքահայերին զենքի մատակարարմամբ և հայկական զինված խմբերին Թուրքիա անցնելու համար օգնության ցուցաբերմամբ⁷:

Ալեքսանդրապոլի և Սուրմալուի գավառային պետերի վերոնշյալ զեկույցները վերջինիս կազմած հետաքննության արձանագրության հետ Երևանի նահանգային կառավարիչը տրամադրել է Երևանի նահանգային ժանդարմական վարչությանը, որը, անցած մարտի 18-ի N 188 գրությամբ ուղարկելով ինձ այս ամբողջ գործը, տեղեկացրեց, որ, ըստ գավառային պետերի զեկույցների, չի տեսնում հետաքննություն անցկացնելու որևէ հիմք՝ նկատի ունենալով, որ՝

1. մի քանի կասկածյալների գործն արդեն լուծվել է վարչական կարգով Երևանի նահանգի սահմաններից նրանց վտարելով, և Կովկասի քաղաքացիական մասի պետի օգնականի կարգադրությամբ ոստիկանության հսկողությամբ Քութայիսի նահանգ վտարման են ենթակա Կողբ գյուղի բնակիչներ Մինաս Տեր-Օզանեզովը, Կարապետ Կասպարովը, Կարապետ Մեսրոպովը և Սվանդերգ գյուղի բնակիչ Մանուկ Դանիելյանցը, և առաջին երկուսը արդեն ուղարկվել են ըստ նշանակման,

2. քանի որ ժանդարմական վարչությունում հայկական ազգային շարժման հետաքննությունը սկսելու օրից անցել է բավականին ժամանակ,

7 ՀԱԱ, Հավաքածու 8, ֆ. 102, ց. 1895, գ. 94, թթ. 1-2:

չի կարելի ուստիկանության հաղորդած տեղեկությունների հիման վրա հետաքննության հաջողության հույս ունենալ,

3. Ժանդարմական վարչությունում անցկացված հետաքննության որևէ հիմք հայտնաբերելու համար Ալեքսանդրապոլի և Սուրմալուի գավառային ոստիկանության ձեռք բերած ճշմարտացի համարված տվյալները մի քանի ցուցումներով ուղղակիորեն ժխտում են այն տվյալները, որ հայտնաբերվել են ժանդարմական վարչությունում:

Բայց Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի այդպիսի կարծիքի հետ ես չեմ կարող համաձայնել, քանի որ՝

ա) նշված գավառային պետերի հաղորդումներում նշվում են այնպիսի հանգամանքներ, որոնք, որոշակի ոստիկանական հետաքննությամբ ստուգապես ճշտված և հետաքննական գործավարության կարգով ստուգված լինելով, կարող են հիմք հանդիսանալ գործ հարուցելու այն անձանց նկատմամբ, որոնք որոշակի ձգտումներ են հանդես բերել՝ օգնելու թուրքահայերին բոլոր հնարավոր միջոցներով թուրքական կառավարության դեմ նրանց պայքարում, որը հետապնդվում է քրեական օրենսգրքի 320-րդ հոդվածով, այդ պատճառով էլ հայկական ազգային շարժման հետ ուղղակի կապ ունեցող նշված հանգամանքները չպետք է թողնել առանց հետաքննության,

բ) ոստիկանության ձեռք բերած տեղեկությունները ժանդարմական պետերին ուշացումով տրամադրելը թեպետ հետաքննության համար կարող է առաջ բերել որոշ դժվարություններ, բոլոր դեպքերում օրինական հիմք չէ նշված տեղեկություններն առանց հետաքննության թողնելու համար, հատկապես որ ոստիկանության հետաքննության արձանագրություններում հիմնավորապես նշվում են թե՛ այն անձինք, որոնց ջանքերով ոստիկանությունը ստացել է այս կամ այն տեղեկությունները, և թե՛ նրանք, ովքեր ենթակա են հարցաքննության, ինչպես նաև այն հանգամանքներն ու փաստերը, որոնք կհաստատվեն վկաների կողմից,

գ) հայկական շարժման գործի առնչությամբ ոստիկանության իրականացրած հետաքննության հետևանքով Երևանի նահանգի սահմաններից մի քանի մասնակիցների՝ վարչական կարգով ժամանակավորապես վտարումը ինքնին իրավական հիմք չէ՝ այդ անձանց որպես մեղադրյալներ ազատելու պատասխանատվությունից, եթե նրանց մեղավոր լինելը կհաստատվի ձևական հետաքննության անցկացմամբ,

դ) չնչին և որևէ նշանակություն չունեցող հանգամանքների վերաբերյալ ոստիկանության ցուցումների անձշտությունը և ոչ հավաստի լինելը ամենևին չեն վկայում գլխավոր, հետաքննության ենթակա իրադարձությունների մասին ոստիկանության հաղորդած տեղեկությունների ոչ հավաստի լինելը, որոնք են՝ վարդապետ Թավաքալյանցի՝ քարոզի միջոցով

բնակչությանը կոչով դիմելը՝ օգնություն ցույց տալու թուրքահայերին, հայկական գինված խմբերի՝ Թուրքիայի սահմանն անցնելը, այս կապակցությամբ Կողբ գյուղի մի քանի բնակիչների կողմից օգնության ու աջակցության ցուցաբերումը և Կողբ գյուղում հակակառավարական բովանդակությամբ հայկական թռուցիկի տարածումը, հատկապես որ այս իրադարձությունների հավաստիության հաստատման համար ոստիկանության հետաքննության արձանագրություններում բերվում են բավականին համոզիչ և ուշադրության արժանի տվյալներ:

Այս ամենով հանդերձ՝ ես առաջարկել եմ Էրիվանի նահանգային ժամդարմական վարչությանը կարգադրություն անել մանրամասն և բազմակողմանիորեն ուսումնասիրելու Ալեքսանդրապոլի և Սուրմալուի գավառային պետերի՝ իրեն ենթակա վարչությանը վերաբերող ցուցումներում առկա բոլոր հանգամանքները և այնուհետև ձեռնամուխ լինելու իրականացրած հետաքննությանն առնչվող հետագա հետաքննական գործունեությանը:

Այդ ամենի մասին կտեղեկացնեմ Ձերդ Գերագանցությանը:

Թիֆլիսի դատական պալատի դատախազի պաշտոնակատար
[ստորագրությունն անընթեռնելի է]

Թիվ 2

N 493

9 ապրիլի 1896 թ.⁸

Ժամանակավոր գրասենյակը պատիվ ունի սրանով ներկայացնելու Ձերդ Գերագանցությանը՝ 1. ընթերցելու Թիֆլիսի դատական պալատի դատախազի պաշտոնակատարի զեկույցը, 2. հավանություն տալու հսկողության տակ առնելու նշված գրաքննության հավատարմատար Պապաջանովին:

Գրասենյակի ղեկավարի փոխարեն [ստորագրությունն անընթեռնելի է]⁹

Թիվ 3

16 ապրիլի 1896 թ. Թիֆլիսի դատական պալատի պարոն դատախազին
N 831

Ի պատասխան այս ապրիլի 9-ի N 493 զեկույցի՝ հանձնարարում եմ Ձեզ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ մանրամասն ստուգելու գոր-

⁸ Նույն տեղում, թթ. 3-5:

⁹ Նույն տեղում, թ. 6:

ծակալների տեղեկությունները Ալեքսանդրապոլ քաղաքում հայկական հեղափոխական կոմիտեի գործունեությանը երդվյալ հավատարմատար Պապաջանովի մասնակցության մասին, և մանրամասն զեկուցել ինձ այն տեղեկությունները, որոնք ձեռք կբերվեն հետաքննությանը, Ձեր ներկայացրած հիմնարկության միջոցով պարզել նշված անձնավորության՝ հանուն հասարակական անվտանգության՝ փաստաբանների կազմում մնալու հնարավորությունը՝ Թիֆլիսի դատական պալատին ենթակա նահանգի սահմաններում:

Արդարադատության նախարար [ստորագրությունն անընթեռնելի է]¹⁰

Թիվ 4

N 66

12 մայիսի 1896 թ.

ք. Կարս¹¹

Գաղտնի

Թիֆլիսի դատական պալատի դատախազին

Տեղեկագիր

Հետաքննություն սկսելու մասին

N 3

12 մայիսի 1896 թ.

Անունը, հայրանունը, ազգանունը կամ մականունը, ներգրավված անձի զբաղմունքը	Ինչպե՞ս վարվել մեղադրյալի հետ	Քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով է նախատեսվում գործը, որի վերաբերյալ իրականացվում է հետաքննություն	Հետաքննության սկիզբը	Ո՞ւմ կարգադրությամբ է սկսվել հետաքննությունը
Մեղադրյալ վարդապետ Թավաքայանց (առայժմ ներգրավված չէ)	Կիրառել միջոցներ, որպեսզի ներգրավվի՝ առանց խուսափելու հետաքննությունից և դատարանից:	Քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածով	Հետաքննությունը սկսվել է 1896 թ. մայիսի 8-ին:	Էրիվանի նահանգային ժանդարմական վարչության պետի կարգադրությամբ

Դատախազ [ստորագրությունն անընթեռնելի է]¹²

10 Նույն տեղում, թ. 8:

11 Նույն տեղում, թ. 9:

Թիվ 5

26 մայիսի 1896 թ.

N 1139

Թիֆլիսի դատական պալատի պարոն դատախազին

ԱՐՄԻՎ

Էրիվանի նահանգային դատարանի IV տեղամասի դատախազ Ռժեցկու այս մայիսի 12-ի N 6 գրությունից N 1 տեղեկագրով պարզ է դառնում, որ Էրիվանի նահանգային ժանդարմական վարչությունում սկսվել է հետաքննություն վարդապետ Թավաքայանցի՝ պետական հանցագործության մեջ մեղադրվելու առնչությամբ:

Սա նկատի ունենալով՝ Գրասենյակը խնդրում է Ձերդ Գերագանցությանը տեղեկացնել այդ մասին Արդարադատության նախարարին՝ զեկուցելու հատկապես այն հանգամանքների մասին, որոնք հիմք հանդիսացան նշված գործը սկսելու համար:

Գրասենյակի պետի փոխարեն [ստորագրությունն անընթեռնելի է]

Թիվ 6

Գաղտնի

Թիֆլիսի դատական

պալատի դատախազ

8 նոյեմբերի 1896 թ.

N 171

ք. Թիֆլիս

Արդարադատության նախարարությանը կից

հատուկ քրեական գործերով զբաղվող

ժամանակավոր գրասենյակ

Ի պատասխան այս տարվա մայիսի 28-ի N 1139 գրության՝ տեղեկացնում եմ ժամանակավոր գրասենյակին, որ այն հանգամանքների մասին, որոնք հիմք հանդիսացան վարդապետ Թավաքայանին դեմ պետական հանցագործության մեղադրանքով հետաքննություն սկսելու համար, զեկուցել եմ պարոն Արդարադատության նախարարին այս տարվա ապրիլի 9-ին № 493 գրությամբ: Էրիվանի նահանգային դատարանի դատախազ Ռժեցկուն ինձ հետ բացատրել են, որ նա Թավաքայանի նկատմամբ հետաքննությունը սկսելու վերաբերյալ № 1 տեղեկագիրը պետք է [տրամադրի] ինձ, այլ ոչ թե անմիջապես Արդարադատության նախարարին:

Պալատի դատախազ [ստորագրությունն անընթեռնելի է]

Քարտուղար [ստորագրությունն անընթեռնելի է]¹³

12 Նույն տեղում, թթ. 10-11:
13 Նույն տեղում, թ. 14:

Վէմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 1 (77), հունվար-մարտ, 2022

Արդարադատության նախարարությանը
կից հատուկ քրեական գործերով զբաղվող
ժամանակավոր գրասենյակ

Թիֆլիսի դատական պալատի դատախազից
Տեղեկագիր N 2

Հետաքննության ավարտի մասին

N 1129

9 հոկտեմբերի 1896 թ.

Այս գործի առնչությամբ հետաքննությունը սկսելու մասին տեղեկագիրն ուղարկվել է Արդարադատության նախարարություն Էրիվանի նահանգային դատարանի IV տեղամասի դատախազ Ռժեցկու կողմից 1896 թ. մայիսի 12-ին N 6 գրությամբ¹⁴:

<p>Հետաքննության մեջ որպես մեղադրյալ ներգրավված անձանց անունը, հայրանունը և կոչումը</p>	<p>Մեղադրյալների նկատմամբ ինչպիսի միջոցներ են ձեռնարկվել հետաքննությունից և դատարանից խուսափումը կանխելու նպատակով</p>	<p>Քրեական պատիժների օրենսգրքի ո՞ր հոդվածներով են ընդգրկված մեղադրյալներից յուրաքանչյուրը</p>	<p>Հետաքննության ավարտի և այն դատախազին ներկայացնելու ժամկետը</p>
<p>Կասկածյալներ էին, բայց տվյալների բացակայության պատճառով հետաքննության մեջ չեն ընդգրկվել որպես մեղադրյալներ՝ Բագրատ Թավաքայանց – վարդապետ, 1) Գեղամ Տեր-Պետրոսով – նախկին պաշտոնյա, 2) Միրբայել Պապաջանով – երգվյալ ատենակալ, 3) Միրաքյանց – Ալեքսանդրապոլի բոլոր հայկական ուսումնարանների տեսուչ, 4) Կարապետյանց – Աստվածամոր եկեղեցուն կից արական դպրոցի ավագ ուսուցիչ, 5) տեր Խորեն Աբգարով – հոգևորական:</p>		<p>Քրեական օրենսգրքի 252-րդ հոդված</p>	<p>Ավարտվել է հոկտեմբերին: Ներկայացվել է դատախազին սեպտեմբերի 8-ի գրությամբ: Ստացվել է նույն ամսի 17-ին:</p>

Թիֆլիսի դատական պալատի դատախազ[ստորագրությունն անընթեռնելի է]

15

14 Նույն տեղում, թ. 15:

15 Նույն տեղում, թթ. 15-16:

Գաղտնի
23 հոկտեմբերի
N 1843

Ժամանակավոր
արդարադատության
Գրասենյակ
Ներկայացնել Նորին
Գերազանցությանը

Նորին Գերազանցություն պարոն
նախարարին
Թիֆլիսի դատական պալատի դատախազից

Զեկույց

Ի պատասխան այս տարվա ապրիլի 16-ի N 831 գրության՝ տեղեկացնում եմ Ձերդ Գերազանցությանը, որ երդվյալ ատենակալ Պապաջանովի վերաբերյալ ոստիկանական գործակալների տեղեկությունների ստուգման ժամանակ չեն հայտնաբերվել տվյալներ, որոնք բացահայտում են նրա մասնակցությունը Ալեքսանդրապոլի հայկական հեղափոխական կոմիտեի գործունեությանը: Այդ կոմիտեի գոյության փաստը քրեական օրենսգրքի 1035-րդ հոդվածով անցկացված հետաքննությամբ չի հաստատվել, և ես դիմել եմ Կովկասի քաղաքացիական մասի պետին՝ այս հոկտեմբերի 6-ի N 1109 գրությամբ հետաքննությունը դադարեցնելու համար:

Տեղական ոստիկանության պաշտոնյաները հրաժարվեցին նշել այն գործակալներին, որոնցից իրենք ստացել են այդ տվյալները, իսկ գավառային պետը հայտարարեց, որ տեղեկացել է այդ կոմիտեի մասին բարյացակամ քաղաքացիների մասնավոր խոսակցություններից:

Էրիվանի նահանգային դատարանի բնութագրմամբ՝ Պապաջանովը՝ որպես երդվյալ ատենակալ, միանգամայն հարգարժան գործիչ է, խելացի և ազնվորեն կատարում է իր պարտականությունները, բայց հայերի ազգային շարժման նկատմամբ նա՝ որպես հայ, անկասկած, համակրանք է տածում: Էրիվանի քաղաք իր մասնավոր այցի ժամանակ Պապաջանովը արտահայտվեց այնպես, որ հիմա չափազանց շատ են խուզարկությունները, ձերբակալությունները, ինչը արդեն վախ է առաջացնում, և ավելի լավ է հեռանալ այս երկրամասից: Հատուկ նշանակություն տալով բռնությանը՝ Պապաջանովը ծանոթացել է այս տարի նոր նշանակված տեղական ժանդարմական վարչության պետ գնդապետ Կլինկովի հետ: Էրիվանի նահանգային դատարանի դատախազ Սաբանովը հայտարարել է, որ չի կարող

վե՛մ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 1 (77), հունվար-մարտ, 2022

երաշխավորել, որ Պապաջանովին տեղական դատական համակարգում թողնելը չի վնասի երկրամասի հասարակական կարգի շահերին, քանի որ այս անձնավորության մասին տեղեկություններից ստացած ընդհանուր տպավորությունը ամենևին հանգստացուցիչ չէ՝ նրա բարեհուսության առումով:

Ես, երդվյալ ատենակալ Պապաջանովի քաղաքական անբարեհուսության վերաբերյալ որևէ վճռորոշ փաստացի տեղեկություն չունենալով, հնարավոր չեմ համարում միջնորդել Ձերդ Գերազանցության առջև՝ միջնորդելու նրան հեռացնելու Թիֆլիսի դատական պալատի երդվյալ փաստաբանների կազմից:

Թիֆլիսի դատական պալատի դատախազ
[ստորագրությունն անընթեռնելի է]

N 1155

13 հոկտեմբերի 1896 թ.¹⁶:

Թիվ 9

Ժամանակավոր գրասենյակը պատիվ ունի Ձերդ Գերազանցությանը ներկայացնելու պետական հանցագործության մեջ մեղադրվող վարդապետ Բագրատ Թավաքայանի և մյուսների գործի վերաբերյալ նախագիծը՝ ստորագրելու համար:

Համաձայն Թիֆլիսի դատական պալատի դատախազի եզրակացության և Կովկասի քաղաքացիական մասի պետի կարծիքի՝ նախատեսվում է այս հետաքննությունը դադարեցնել մեղադրանքի ոչ ապացուցելի լինելու պատճառով:

Գրասենյակի վարիչ

27 հոկտեմբերի 1896 թ.

Դատախազ

[ստորագրությունն անընթեռնելի է]

[ստորագրությունն անընթեռնելի է]¹⁷

¹⁶ Նույն տեղում, թթ. 17-18:

¹⁷ Նույն տեղում, թ. 19:

Թիվ 10

27 նոյեմբերի 1896 թ.
N 2919

Ներքին գործերի պարոն նախարարին

ԱՐՆԻՎ

Հայկական հեղափոխական կազմակերպությանը պատկանելու մեղադրանքով վարդապետ Բագրատ Թավաքայանի և ուրիշների հետաքննությունը դրանից բխող եզրակացությանը, Կովկասի քաղաքացիական մասի պետի N 1055 գրությամբ դադարեցնել:

Արդարադատության նախարար [ստորագրությունն անընթեռնելի է]
Հաստիքային քարտուղար [ստորագրությունն անընթեռնելի է]¹⁸

Թիվ 11

Գաղտնի
Նորին Գերագանցություն
Ս. Է. Զվուլինսկուն

Ողորմած Տեր Սերգեյ Էրաստովիչ

Ուսումնասիրելով վարդապետ Բագրատ Թավաքայանցի և մյուսների գործը (այս հետաքննությունը № 2919 գրությամբ ուղարկվել է Ներքին գործերի նախարարություն), որոնք մեղադրվում են հայկական հեղափոխական ընկերությանը պատկանելու մեջ, արդարադատության պարոն նախարարն ուշադրություն դարձրեց Ալեքսանդրապոլի գավառային ոստիկանության պաշտոնյաներ գնդապետ Ստոպենսկու, կոլեգիական ասսետոր Մնեգիրյովի և պրիստավ Արսենևի հաղորդումների վրա, այն է՝ Էրիվանի նահանգապետին հասցեագրված զեկուցումներում ոչնչով չհիմնավորված և որպես արդյունք՝ չհաստատված տեղեկություններ Ալեքսանդրապոլում հայկական հեղափոխական կոմիտեի, դրան հետաքննության մեջ նշված անձանց պատկանելության և նշված վարդապետ Թավաքայանցի՝ եկեղեցում արտասանած հակակառավարական բովանդակությամբ քարոզի մասին: Ընդ որում, տեղեկությունները ոչ միայն հիմք հանդիսացան ներկա հետաքննության հարուցման համար, այլև հանգեցրին Ալեքսանդրապոլից քաղաքային ուսումնարանների տեսուչ Միրաքյանցի, Աստվածամոր եկեղեցուն կից արական դպրոցի ավագ ուսուցիչ Կարապետյանցի և հոգևորական տեր Խորեն Աբգարովի արտաքսմանը:

Պարտքս եմ համարում շարադրվածի մասին տեղեկացնել՝ պայմանա-

վէմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 1 (77), հունվար-մարտ, 2022

18 Նույն տեղում, թ. 20:

վորված Ձերդ Գերագանցության կարգադրությամբ: Խնդրում եմ ընդունել իմ խորին հարգանքը Ձեր նկատմամբ:

[ստորագրությունն անընթեռնելի է]¹⁹

Թիվ 12

N 2263

Գաղտնի

Ժամանակավոր

Գրասենյակ

Ոստիկանության

Ողորմած Տեր,
Անդրեյ Միխայլովիչ

Դեպարտամենտի

տնօրենի պաշտոնակատար

Նորին Գերագանցություն

Տրեմոզնովին

Անցած նոյեմբերի 26-ի N 2930 նամակով Ձերդ Գերագանցությունը տեղեկացրեց ինձ, որ արդարադատության պարոն նախարարը, ուսումնասիրելով Էրիվանի նահանգային ժանդարմական վարչությունում քրեական օրենսգրքի 1035-րդ հոդվածով անցկացված՝ պետական հանցագործության մեջ մեղադրվող վարդապետ Բագրատ Թավաքալյանի և մյուսների գործի հետաքննության մանրամասները, իրեն թույլ է տվել ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ այս գործը սկսելու համար առիթ են ծառայել բոլորովին չհիմնավորված և, ինչպես պարզվում է զեկուցումների ուսումնասիրության ժամանակ, ամենևին չհաստատված Ալեքսանդրապոլի ոստիկանության պաշտոնյաների տեղեկությունները:

Այս ամենը նկատի ունենալով՝ անհրաժեշտ եմ համարում տեղեկացնել Ձերդ Գերագանցությանը, որ, ինչպես երևում է, Ոստիկանության դեպարտամենտում եղած տեղեկությունները, որոնք Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի հրամանով տրվել են տեղական ժանդարմական վարչությանը՝ Էրիվանի նահանգապետի կողմից Ալեքսանդրապոլում գոյություն ունեցող գաղտնի հայկական կոմիտեի և դրան անդամակցած անձանց մասին ոստիկանական հետաքննությունների պատճեններով, նշված վարչության պետի կողմից 1896 թ. մարտի 18-ին ուղարկվել են Թիֆլիսի դատական պալատի դատախազին՝ որոշման համար: Նա

19 Նույն տեղում, թթ. 23-24:

ապրիլի 9-ի N 492 գրությամբ առաջարկել է վարչության պետին մանրամասն և բազմակողմանիորեն ուսումնասիրել հետաքննությունում նշված հանգամանքները, դրանց կապը նույն ժամանակ վարչությունում անցկացվող հայկական շարժման վերաբերյալ հետաքննության հետ և հետագայում իրականացնել քննչական գործողություններ՝ հետաքննության արդյունքներին համապատասխան: Նկատի ունենալով այս ամենը՝ վարչության պետը, Էրիվանի նահանգային դատարանի դատախազի համաձայնությամբ, 1896 թ. ապրիլի 17-ին կարգադրեց այս գործով սկսել հետաքննություն:

Ինչ վերաբերում է վարչական պատիժներին՝ կիրառված այն անձնավորությունների նկատմամբ, որոնց հանցավոր գործունեությունը այս հետաքննության օբյեկտն է, ապա դրանք կիրառվել են Ներքին գործերի նախարարության կողմից քրեական օրենսգրքի՝ պետական կարգի պահպանման 34-րդ հոդվածի համաձայն, կառավարչապետի 1896 թ. N 103 հատուկ միջնորդությամբ: Այս միջնորդության հիման վրա, հատուկ խորհրդակցության որոշմամբ՝ հաստատված ներքին գործերի նախարարի կողմից այս տարվա մարտի 11-ին, այսինքն՝ շատ ավել վաղ, քան այս գործի պատճենական հետաքննության հարուցումը, հայ հոգևորական տեր Խորեն Աբգարովը, հայկական ծխական ուսումնարանների տեսուչ Միրաքյանցը և ավագ ուսուցիչ Կարապետյանցը դատապարտվել են աքսորի երեք տարի ժամկետով՝ ոստիկանության հսկողության տակ, առաջինը՝ Վորոնեժի նահանգ, իսկ մնացածները՝ Տամբովի նահանգ, և կառավարչապետին իրավունք է տրվել անհրաժեշտության դեպքում վարդապետ Թավաքայանցին աքսորելու Կուրսկի նահանգ հինգ տարի ժամկետով՝ ոստիկանության հսկողության տակ: Այս միջոցը, սակայն, չկիրառվեց՝ նկատի ունենալով այն, որ կաթողիկոսի կարգադրությամբ նրան Ալեքսանդրապոլից տեղափոխել են Ելիզավետպոլ: Այս տարվա սեպտեմբերին Աբգարովը, Միրաքյանցը և Կարապետյանցը ազատվել են ոստիկանության հսկողությունից 1896 թ. մայիսի 14-ի մանիֆեստի հիման վրա:

Ընդունե՛ք, ողորմա՛ծ Տեր, իմ խորին հարգանքը և հավատարմությունը:

N 2712

13 դեկտեմբերի 1896 թ.

[ստորագրությունն անընթեռնելի է]²⁰

20 Նույն տեղում, թթ. 25-26:

Թիվ 13

Ներքին գործերի
Նախարարություն,
Ոստիկանական
Գաղտնի

Դեպարտամենտ,

4-րդ գործավարություն, Արդարադատության պարոն նախարարին
31 մարտի 1897 թ.

N 888

Վերադարձնելով Բագրատ Թավաքայանի և մյուսների՝ հայկական հեղափոխական ընկերությանը պատկանելու մեղադրանքով անցած տարվա հետաքննության՝ սոյեմբերի 27-ի N 2919 գրությունը և դրա հետ կապված հավելվածը՝ պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ Գերագանցությանը, որ հնարավոր եմ համարում այս գործի հետագա իրականացումը դադարեցնել:

Նախարարի փոխարեն
[ստորագրությունն անընթեռնելի է]²¹

Թիվ 14

30 հոկտեմբերի
Գաղտնի
N1904

Ժամանակավոր գրասենյակ Արդարադատության պարոն նախարարին

Կովկասի քաղաքացիական Հենվելով քրեական օրենսգրքի 1880-րդ հոդվածի վրա՝ մասի կառավարչապետ ուղարկում եմ Թիֆլիսի դատական պալատի 23 հոկտեմբերի 1896 թ. դատախազի հոկտեմբերի 6-ի N 1109 գրությունը հայ N 1055 վարդապետ Բագրատ Թավաքայանի և մյուսների՝ ք. Թիֆլիս հայկական հեղափոխական ընկերությանը

պատկանելու մեղադրանքով հետաքննության նյութերի հետ միասին և դատախազական վերահսկողության եզրակացությունը այս հետաքննության հետագա իրականացման մասին: Պատիվ ունեմ տեղեկացնելու, որ կարծում եմ,

21 Նույն տեղում, թ.27:

որ, համաձայն դատական պալատի դատախազի եզրակացության, այս գործի հետագա ընթացքը [պետք է] դադարեցնել:

Կառավարչապետի փոխարեն

նրա օգնական, գեներալ

[ստորագրությունն անընթեռնելի է]

Տնօրեն

[ստորագրությունն անընթեռնելի է]²²:

Թիվ 15

Գաղտնի

Եզրակացություն

Էրիվանի նահանգային ժանդարմական վարչության պետի օգնականի կողմից քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն վարդապետ Բագրատ Թավաքայանցի և մյուսների՝ հայկական հեղափոխական ընկերությանը պատկանելու մեղադրանքով հետաքննության հետագա իրականացման մասին:

Ներկայիս հետաքննությունը սկիզբ է առել Էրիվանի նահանգային ժանդարմական վարչության պետի՝ այս տարվա ապրիլի 16-ի N 232 գրության վրա հիմնված՝ Ալեքսանդրապոլի գավառային պետերի՝ Էրիվանի նահանգապետին հասցեագրված 1895 թ. դեկտեմբերի 2-ի և 3-ի N 331 գեկույցներից:

Առաջին գեկույցից պարզվել է, որ 1895 թ. նոյեմբերի 12-ին Ալեքսանդրապոլի վարդապետ Բագրատ Թավաքայանցը եկեղեցում քարոզ է կարդացել ձնշված թուրքահայերի տանջանքների մասին, ընդ որում, խորհուրդ տալով օգնելու վերջիններիս, հայտարարել է, որ հայերը չպետք է դիմեն որևէ տիրակալի օգնությանը, քանի որ նրանք, բացի Աստծուց, ուրիշ ցար չունեն, և այնուհետև խնդրել է միանալ հայերին օգնելու ընդհանուր շարժմանը: Այս գեկույցը հիմնված էր քաղաքային պրիստավներ Արսենևի և Տեր-Պետրոսովի գեկույցների վրա²³:

Երկրորդ գեկույցը տեղեկացնում էր, որ, ըստ Արսենևի ձեռք բերած տեղեկությունների, Ալեքսանդրապոլի հայկական հեղափոխական կոմիտեի գլխավոր ղեկավարներն են՝ 1. նշված վարդապետ Բագրատ Թավաքայան-

²² Նույն տեղում, թ. 28:

²³ Նույն տեղում, թ. 29:

ցը, 2. Բաքվի նահանգի պետական ունեցվածքի վարչության նախկին պաշտոնյա, Պետրովսկի ակադեմիայի շրջանավարտ Գեղամ Տեր-Պետրոսովը, 3. հավատարմատար Միքայել Պապաջանովը, 4. արտասահմանում կրթություն ստացած, Թուրքիայում երկար ժամանակ ուսուցիչ աշխատած, Ալեքսանդրապոլի հայկական դպրոցների տեսուչ Միրաքյանցը, 5. Աստվածամոր եկեղեցուն կից արական դպրոցի ավագ ուսուցիչ Կարապետյանցը և 6. հոգևորական տեր Խորեն Աբգարովը:

Ըստ այդ տեղեկությունների, որոնք ստացվել էին զեկույցում չնշված գաղտնի գործակալներից, նշված անձինք հավաքվում էին մեկի կամ մյուսի տանը, ավելի հաճախ հավաքները լինում էին վարդապետ Թավաքալյանցի տանը, բայց հետագայում դրանք ավելի սակավ են դառնում և ի վերջո ժանդարմական ոստիկանության իրականացրած խուզարկությունների հետևանքով բոլորովին դադարում են: Վարդապետ Թավաքալյանցը դադարեց հաճախել նման հավաքներին՝ շարունակելով հանդիպել կոմիտեի առանձին անդամների, հատկապես Պապաջանովի հետ, որի մոտ մնում էր մի քանի ժամ: Հոգևորական Աբգարը, ինչպես նշվում է զեկույցագրում, իր վրա վերցրեց ոստիկանական 4-րդ տեղամասի բնակչությունից դրամահավաքությունը և այդ նպատակով նոյեմբերի 6-9-ն ընկած ժամանակահատվածում մեկնեց գյուղեր՝ նախագգուշացնելով բնակչությանը լինել զգույշ և իրենց գործունեությունը բացահայտվելու դեպքում լիովին ամեն ինչ ժխտել:

Այնուհետև այդ զեկույցագրում նշվում է ևս մեկ հանգամանք. քաղաքական գործով բանտում գտնվող Դավիդ Օդոբաշևի հայրը հաղորդել էր ոստիկանական գործակալին, որ եթե Ալեքսանդրապոլի հայկական գործի ջատագովները չհավաքեն հազար ռուբլի և այն չտրամադրեն որպես գրավ իր որդու համար, ապա ինքը հանգամանքների բերումով հարկադրված կլինի բացահայտել հայկական շարժման ամբողջ գործը: Եվ քանի որ նա, ըստ գավառային պետի տեղեկության, բոլորովին ի վիճակի չէր գրավ վճարելու ձերբակալվածի համար, և վերջինս ազատ է արձակվել, ուստի կոմիտեի մասնակցությունը այս ազատ արձակման գործում կասկածից դուրս է և ոստիկանությանը դրել է ավելի բարդ վիճակի մեջ, ինչը կապված է կոմիտեի գործունեության հետ: Վերջապես այդ նույն զեկույցագրից ճշտվել է, որ նոյեմբերի 7-ին՝ Թուրքիայում սպանվածների հոգեհանգստից հետո, կարգադրվել էր նոյեմբերի 12-ին ընդունել ավագներին՝ հայկական շարժման համար գունար հավաքելու նպատակով:

Նշված զեկույցագրերի բովանդակության առնչությամբ հարցաքննվեցին պրիստավներ Արսենևը և Տեր-Պետրոսովը (ներկայումս՝ Ալեքսանդրապոլի բանտի վերահսկիչ), որոնց ցուցմունքներից պարզվում է, որ նրանք ներկա չեն եղել քարոզին և դրա բովանդակության մասին իմացել են, Տեր-Պետրոսովը՝ Հակոբ Կարապետով Պարոնյանցից, իսկ Արսենևը՝ իր գաղտնի գործա-

կալներից, և դրանք իրենց զեկուցագրերում ամբողջությամբ չեն ներկայացրել, այլ լրացվել են գավառային պետ Մսեգիրովի կողմից: Հունիսի 5-ին Թիֆլիս քաղաքում հարցաքննված Հակոբ Պարոնյանցը բացատրեց, որ որքան որ ինքն է հասկացել, վարդապետ Թավաքայանցը ասել է, որ իրենք չէղել են Աստծու նշած ճանապարհից, սիրեն միմյանց, և ամենը՝ այս ոգով, ընդ որում, ինքը չի լսել այս քարոզի կամ որևէ այլ ժամանակ, որ վարդապետ Թավաքայանցը խորհուրդ կտար հայերին չդիմելու որևէ տիրակալի, քանի որ, բացի Աստծուց, այլ ցար նրանք չունեն²⁴:

Այս կապակցությամբ հետաքննությամբ հարցաքննության ենթարկվեցին Պարոնյանցի քույրը՝ Գենիմյան, և եղբոր կինը՝ Վարսենիկը, որոնք հայտարարեցին, որ Թավաքայանցի քարոզի մասին իրենց ոչինչ հայտնի չէ, և Հակոբից նույնպես իրենք այդ մասին ոչինչ չեն լսել:

Որպես վկաներ տարբեր նպատակներ հետապնդելով՝ հետաքննությամբ հարցաքննված Հակոբ Թուփխանովը, Ավագ Տեր-Պետրոսովը, Հարություն Պապաջանյանցը, Գևորգ Քետրաբովը, Հովակիմ Պահլավունին, Հարություն Դուկայանցը, Հարություն Աղաքոյանցը, Թաթոս Ադիկյանցը, Հովհաննես Ակիմովը, Կարապետ Պետրոսյանցը և Համբարձում Մարտիրոսյանցը վկայեցին, որ իրենց ոչինչ հայտնի չէ Թավաքայանցի քարոզի, ինչպես նաև թուրքահայերի օգտին հավաքների մասին, և որևէ մեկը իրենց չի հրավիրել քարոզի: Նրանցից միայն Հովակիմ Պահլավունին է ներկա եղել քարոզին, և վկայի խոսքերով՝ վարդապետը երկնային թագավորություն է խնդրել սպանվածների համար, բայց վկան չի լսել, որ Թավաքայանցը ասեր, որ, բացի Աստծուց, ուրիշ ցար իրենք չունեն:

Դավիթ Օդոբաշևի հայրը՝ Հովհաննեսը, բացատրություն տվեց, որ ինքը հայկական ազգային շարժման մասին ոչինչ չգիտի և այդ շարժման ղեկավարներին չի դիմել իր որդու՝ Դավիթ Օդոբաշևի համար գրավը վճարելու խնդրանքով, այլ խնդրել է հետաքննությունն իրականացնող ռոտմիստր Մինկևիչին ազատել Դավիթին՝ որպես գրավ թողնելով տունը, բայց այս հարցում մերժում է ստացել: Դավիթ Օդոբաշևի գործից երևում է, որ նա ազատվել է գրավով՝ դատախազական վերահսկողության առաջարկությամբ, և ոստիկանության հատուկ հսկողության տակ է:

Գավառի պետ Ստոպյենսկու և նրա օգնական Մսեգիրովի հարցաքննությունից պարզվում է, որ Ալեքսանդրապոլ քաղաքում հայկական գաղտնի ընկերությանը վերաբերվող տեղեկությունները, որին նրանք անվանում են «հեղափոխական կոմիտե», և դրան Թավաքայանցի, Պապաջանովի, Տեր-Պետրոսովի, Միրաքյանի, Կարապետյանցի և տեր Խորեն Աբգարովի անդամակցության մասին նրանք իմացել են պրիստավ Արսենևից, իսկ վեր-

24 Նույն տեղում, թթ. 30-31:

ջինս՝ մեր գործակալների տեղեկություններից: Որևէ փաստացի տվյալ, որ կհաստատուի այս տեղեկությունները, Արսենը չի բերում, միաժամանակ չի ներկայացնում աղմկահարույց ընկերության չպարզված նպատակները: Վկա Ստոպենսկին ենթադրում է, որ այդ նպատակները պետք է միտված լինեին տառապյալ եղբայրներին օգնելուն և հայկական թագավորություն ստեղծելուն: Նրա խոսքերով՝ կոմիտեի գործունեությանը մասնակցել են 2-3 հոգևորականներ, ընդ որում, նրանք իրեն ծանոթ չեն: Կոմիտեի գոյության հարցում նա համոզվել է՝ ելնելով գաղտնի գործակալական գրագրությունից՝ հասցեագրված Էրիվանի նահանգապետին, և օրինապահ քաղաքացիների մասնավոր խոսակցություններից, որոնք, արտահայտելով ոչ համակիր վերաբերմունք այդ մարդկանց խմբի և մտածելակերպի նկատմամբ, չեն բացահայտել կոնկրետ նպատակները և ձգբրիտ ժամանակը: Կոմիտեի թվարկված հայտնի դեմքերից, ըստ Ստոպենսկու բացատրության, վարդապետ Թավաքայանցը ներկայումս Ելիզավետպոլում է, Միրաքյանցը, Կարապետյանը և տեր Խորեն Աբգարովը, նահանգապետի գրության համաձայն, ներքին գործերի նախարարի համաձայնությամբ, վարչական կարգով Ալեքսանդրապոլից արքորվել են Ռուսաստանի ներքին նահանգներ: Ընդ որում, Ստոպենսկին հայտարարեց, որ ինքը չի կարող հստակ ձևակերպել, թե ինչու են այդ մարդիկ արքորվել, բայց, որքան որ մտաբերում է, հայկական շարժմանը մասնակցության համար: Նրա կարծիքով՝ բացահայտել կոմիտեի գործունեությունը դժվար է՝ նկատի ունենալով հայերի խիստ համախմբվածությունը և գործակալական միջոցների բացակայությունը:

Նկատի ունենալով գնդապետ Ստոպենսկու՝ ցուցմունքներից հրաժարվելը՝ ռոտմիստր Յունկևիչը հուլիսի 10-ին իր իսկ գրությամբ հանդիպեց Էրիվանի նահանգային ժանդարմական վարչության պետին և պարտավորեցրեց Ստոպենսկուն՝ ա) ցույց տալ և կանչել այն անձանց, որոնց խոսակցություններից ինքը իմացել է հայկական հեղափոխական կոմիտեի գործունեության մասին, բ) ծանոթացնել իրեն՝ որպես հետաքննությունն իրականացրածի, այն գրագրությանը, որն իրականացվել է այս կապակցությամբ Էրիվանի նահանգապետի հետ, և գ) հաղորդել տեղեկություններ Ալեքսանդրապոլից Միրաքյանցի, Կարապետյանցի և տեր Խորեն Աբգարովի արտաքսման պատճառների մասին:

Այս առաջարկների առնչությամբ Էրիվանի նահանգային դատարանի դատախազը սեպտեմբերի 1-ի N 14 գրությամբ տեղեկացրեց ռոտմիստր Յունկևիչին, որ Էրիվանի նահանգապետը հաղորդել է իրեն, որ թե՛ իր մոտ և թե՛ Ալեքսանդրապոլի ոստիկանությունում բացակայում են այլ տվյալներ Թավաքայանցի և մյուսների՝ հայկական շարժմանը պատկանելու մեղադրանքի վերաբերյալ՝ բացի նրանցից, որոնք պարզվել են իրականացված հետաքննությամբ, և Միրաքյանցի, Կարապետյանցի ու Աբգարովի վարչական

աքսորման համար հիմք է հանդիսացել նույն զեկուցումը՝ հիմնված Էրիվանի վարչության համապատասխան պաշտոնյաների [հանդեպ] անձնական վստահության վրա: Ինչ վերաբերում է գործակալների անունների և ազգանունների վերաբերյալ գավառային պետի պահանջին, ապա այսօր այդ տեղեկությունները չեն կարող գործի համար օգտակար լինել, քանի որ գործակալները Ստոպենսկուն չեն հաղորդել փաստեր, որոնք բացահայտ բնույթ ունենային, այլ միայն ցուցումներ են տվել, որոնց գնահատումը ամբողջովին կախված էր Ստոպենսկուց և վերջիններիս նկատմամբ վստահությունից:

Վերը շարադրվածից պարզվում է, որ Ալեքսանդրապոլի վարդապետ Թավաքալյանցի, Գեղամ Տեր-Պետրոսովի, Միքայել Պապաջանովի, Միրաբյանցի, Կարապետյանցի, տեր Խորեն Աբգարովի՝ հայկական հեղափոխական ընկերությանը պատկանելու մեղադրանքի առնչությամբ հետաքննությամբ որևէ տեղեկություն ձեռք չի բերվել, այդ պատճառով նախատեսում են ներկայումս կասեցնել գործի հետագա իրականացումը:

Կազմվել է 1896 թ. հոկտեմբերի 6-ին Թիֆլիսում

Պալատի դատախազ [ստորագրությունն անընթեռնելի է]²⁵

Թիվ 16

9 ապրիլի 1897թ

Կովկասի քաղաքացիական մասի պարոն կառավարչապետին
N 820

Վերադարձնելով Արդարադատության նախարարություն ուղարկված՝ վարդապետ Բագրատ Թավաքալյանցի և մյուսների՝ հայկական հեղափոխական ընկերությանը պատկանելու մեղադրանքի առնչությամբ հետաքննության 1896 թ. հոկտեմբերի N 1056 գրությունը՝ պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ Պայծառափայլությանը՝ հետագա կարգադրությունների համար, որ ես, Ներքին գործերի նախարարության համաձայնությամբ, կարծում եմ, որ ներկայիս գործը հետագա իրականացման ենթակա չէ:

Արդարադատության նախարար
Քարտուղար
Գրասենյակի կառավարիչ

[ստորագրությունն անընթեռնելի է]
[ստորագրությունն անընթեռնելի է]
[ստորագրությունն անընթեռնելի է]²⁶

²⁵ Նույն տեղում, թթ. 32-35:

²⁶ Նույն տեղում, թ. 35:

Summary

IN THE FOOTSTEPS OF A REMARKABLE SERMON

The investigation of the Police Department on the sermon of Archimandrite Bagrat Tavakalyan on November 12, 1895.

Mkrtich D. Danielyan

Candidate of Sciences in History

Key words – sermon, apostle, ARF Dashnaksutyun, God, national figure, Police Department, Tiflis Court Chamber, Minister of Justice, Archimandrite Bagrat Tavakalyan, conclusion.

Archimandrite Bagrat Tavakalyan is one of the outstanding figures of the Armenian national liberation movement. He actively participated in the People's Liberation movement, became a member of the Dashnaksutyun party and left a noticeable mark in the history of the national liberation movement. Tavakalyan was born in Derbent in the family of an employee. He refused to study at the Junker school and began working in the village of Mikhaylovo as an idle worker and at the same time studying the works of Russian utopian socialists. Already since 1877, the young Tavakalyan begins to promote revolutionary ideas. When he was 21 years old, Tavakalyan tried to write and read in Armenian. He was one of the first narodnik figures who bowed to the idea of combining the ideology of the revolutionary movement with the problems of the Armenian reality and thereby became one of the founders of the national-narodnik trend. In 1880, he went on foot through Igdır and Alexandropol, crossed to Turkey, examined Armenian villages for more than a year, and then settled in Van. From Van, he leaves Taron, where he worked as a Derik teacher for two years. In Turkey, he was extirpated under the pseudonym Zaqi. Consequently, Tavakalyan returns to the Caucasus, and then goes back to Turkey and receives the title of archimandrite under the name Bagrat from the bishop.

Tavakalyan, like many former national-narodniks, became a member of the Dashnaksutyun party and actively participated in its activities. He especially distinguished himself in Atrpatakan, becoming the abbot of Derik monastery and by all means contributed to the transfer of hayducs, weapons and ammunition to Western Armenia.

It is known that Tavakalyan was also active in Alexandropol. The presented archival documents are the materials of Tavakalyan's activity in Alexandropol and the investigation on his truly historic sermon on November 12,

1895, organized by the Tsarist Police Department, which are published for the first time.

Резюме

ПО СЛЕДАМ ОДНОЙ ПРИМЕЧАТЕЛЬНОЙ ПРОПОВЕДИ

Следствие Департамента полиции России по делу о деятельности архимандрита Баграта Тавакаляна и его проповеди, проведенной 12 ноября 1895 г.

Մկրտիչ Դ. Դանիելյան

Канд. ист. Наук

Ключевые слова-проповедь, апостол, АРФ Дашнакцутюн, Бог, национальный деятель, Департамент полиции, Тифлисская судебная палата, министр юстиции, архимандрит Баграт Тавакалян, заключение.

Архимандрит Баграт Тавакалян (революционный псевдоним Заки) является одним из известных деятелей армянского национально-освободительного движения 1880-1890 гг. В 1880-е он участвовал в народническом движении, а после 1890 г. стал членом АРФ Дашнакцутюн и оставил заметный след в истории этой партии.

Тавакалян родился в г. Дербенте в семье служащего. В юном возрасте бросил учебу в юнкерской школе и начал работать на станции Михайлово недалеко от Сурами как простой рабочий, одновременно изучал труды русских народников-социалистов. Начиная с 1877 г. молодой Тавакалян проповедует революционные идеи. Писать и читать на армянском он научился, когда ему исполнился 21 год.

Тавакалян был одним из первых армянских деятелей, который совместил идеологию революционного народничества с проблемами армянского национально-освободительного движения. Поэтому он считается одним из основоположников политики и идеологии АРФ Дашнакцутюн. В 1880 г. Тавакалян пешком через Игдир перебирается в Западную Армению, более года изучает жизнь в армянских селениях, а потом обустроивается в городе Ван. Вскоре он уезжает из Вана в Тарон, где два года работает учителем в селе Джрик. В Западной Армении он был известен под псевдонимом «Заки». Позже Тавакалян возвращается на Кавказ, но через три года снова отправляется в Запад-

ную Армению и в Алашкерте от местного епископа получает сан архимандрита, приняв духовное имя Баграт.

Тавакалян, как и многие бывшие национал-народники, стал членом партии Дашнакцутюн и активно участвовал в борьбе за освобождение Западной Армении. Став настоятелем монастыря Дерик в иранском Атрпатакане, он всеми средствами содействовал переходам гайдуков Западную Армению, переправке оружия и боеприпасов.

Известно, что по возвращении из Атрпатакана Тавакалян продолжал свою активную деятельность и в Александрополе. Представленные ниже архивные документы это материалы следствия по делу о его поистине исторической проповеди, проведенной 12 ноября 1895 г. в Александрополе. Материалы следствия организованного царским Департаментом полиции, публикуются впервые

REFERENCES

1. Bagrat vardapet T'avak'aleani namaknerë, grets' S. Vrats'ean, "Hayrenik'" amsagir, Post'ën, 1993, N 1, 2, 3 (**In Armenian**).
2. НАА, Havak'atsu 8, f. 102, ts'. 1895, g. 94, t't'. 1-6, 8-12, 14-20, 23-35 (**In Armenian**).
3. **Khudinyan G.**, HY Dashnakts'ut'yan k'nnakan patmut'yun. akunk'nerits' minch'ev 1895 t'vakani verjerë, Yer., 2006 (**In Armenian**).
4. **P'irumean T.**, Ch'ors tari Vanum, "Horizon", T'iflis, 1916, N 121 (**In Armenian**).